



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

### COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

#### 1.4 (30)

##### **Общественные и гуманитарные науки**

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

##### **Humanities and Social Sciences**

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

## ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### 1.4 (30)

#### **Հասարակական և հումանիտար գիտություններ**

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the Resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան  
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան  
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան  
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան  
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան  
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան  
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան  
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան  
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան  
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան  
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան  
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան  
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան  
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան  
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան  
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

**Редакционная коллегия:**

д.ф.н., проф. Д. Петросян  
д.ф.н., проф. Л. Матевосян  
д.ф.н., проф. Ю. Аветисян  
д.ф.н., проф. А. Мурадян  
д.ф.н., проф. В. Арутюнян  
д.п.н., проф. Г. Аванесян  
д.и.н., проф. С. Мкртчян  
д.э.н., проф. А. Мнацаканян  
д.э.н., проф. А. Саргсян  
д.п.н., проф. Г. Керян  
д.ф.н., доц. Ш. Паронян  
к.ф.н., доц. Н. Варданын  
к.ф.н., доц. В. Егиазарян  
к.э.н., доц. К. Хачатрян  
к.ф.н., ассист. Н. Погосян  
к.ю.н., ассист. В. Григорян  
к.ю.н., ассист. Т. Суджян  
к.ю.н., ассист. А. Тавадьян  
к.п.н., ассист. Д. Саргсян  
к.и.н., ассист. Р. Карапетын  
к.ф.н., ассист. К. Яралян

**Editorial Board**

DSc, Prof. D. Petrosyan  
DSc, Prof. L. Matevosyan  
DSc, Prof. Y. Avetisyan  
DSc, Prof. S. Muradyan  
DSc, Prof. V. Harutyunyan  
DSc, Prof. H. Avanesyan  
DSc, Prof. S. Mkrtchyan  
DSc, Prof. H. Mnatsakanyan  
DSc, Prof. H. Sargsyan  
DSc, Prof. T. Keryan  
DSc, Associate Prof. Sh. Paronyan  
DSc, Associate Prof. N. Vardanyan  
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan  
PhD, Associate Prof. K. Khachatryan  
PhD, Assistant Prof. N. Poghosyan  
PhD, Assistant Prof. V. Grigoryan  
PhD, Assistant Prof. T. Sujyan  
PhD, Assistant Prof. A. Tavadyan  
PhD, Assistant Prof. D. Sargsyan  
PhD, Assistant Prof. R. Karapetyan  
PhD, Assistant Prof. K. Yaralyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրանտ  
Գիտական ղեկավար՝ ք.գ.թ., դոց. Է. Քալանթարյան  
Էլ. փոստ՝ [siranushserobyan@gmail.com](mailto:siranushserobyan@gmail.com)

**ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ**

Հանրային հատվածը, ընդհանուր առմամբ, կարևոր նշանակություն և ազդեցություն ունի պետության զարգացման ու առաջընթացի գործում: Պետական համակարգը ծանրաբեռնված է, բյուջետային հատկացումները չեն բավարարում բոլոր հիմնախնդիրների կարգավորման և լուծման համար: Բացի այդ, կառավարությունը հաճախ ձախողվում է մի կողմից անարդյունավետ և ոչ մասնակցային, մյուս կողմից՝ խոցելի խմբերի կարծիքի վրա հիմնված քաղաքականություն վարելու պատճառով՝ արդյունքում խաթարելով հասարակական և քաղաքական գործընթացների բնականոն ընթացքը: Պետությունը՝ որպես սոցիալական քաղաքականության սուբյեկտ, հանրային հիմնախնդիրների կարգավորման գործընթացին աջակցելու համար օգտագործում է իր բոլոր լծակները: Բայցևայնպես, պետությունը միայնակ չի կարող միաժամանակ և՛ արդյունավետորեն գործել, և՛ կարգավորումներ իրականացնել. անհրաժեշտ է մասնավոր և երրորդ հատվածի աջակցությունը:

Ներկայումս երրորդ հատվածի ազդեցությունը կարևոր է այնքանով, որ օր օրի ավելանում են հիմնախնդիրները, դրանցից շատերը տրանսֆորմացվում են, տեխնոլոգիական առաջընթաց ենք ապրում, արտաքին ու ներքին հակամարտությունները սրվում են, պետությունների առջև ծառանում են տարբեր մարտահրավերներ, որոնց լուծումը պահանջում է նաև քաղաքացիների և մասնավորապես՝ հիմնախնդիրների բացասական ազդեցությունից տուժող խմբերի առավել մեծ մասնակցություն:

Վերոնշյալ գործոնների առկայությամբ է պայամանավորված հանրային հատվածի ներգրավվածությունը և ակտիվությունը՝ աջակցելու ու համագործակցելու քաղաքականության մշակման, իրականացման, գնահատման և բարեփոխումների գործընթացներում:

Երրորդ հատվածն ապահովում է քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածությունը երկրի կառավարման և զարգացման գործում: Այս հատվածի դերը, նշանակությունը և ազդեցությունը կախված է տվյալ հասարակության հասարակարգից և քաղաքական վարչակարգից:

Քաղաքացիական հասարակությունը *«ժողովրդավարական պետություններում ձևավորվող ու զարգացող մարդկային հանրույթն է, որը հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում կամավոր ձևավորված ոչ պետական կառույցների (միավորումներ, կազմակերպություններ, ասոցիացիաներ, միություններ, կենտրոն-*

ներ, ակումբներ, հիմնադրամներ) ցանց է և ոչ պետական հարաբերությունների ամբողջություն» [1]:

Նույնիսկ ամբողջատիրական, միապետական վարչակարգերի պայմաններում կարող են գոյություն ունենալ քաղհասարակության ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալներ: Սակայն այն պայմանների բացակայությունը, որոնք ապահովում են պետական իշխանությունից այդ տարրերի ինքնուրույնությունը՝ ինքնակազմակերպման ու ինքնագործունեության իրավունքը, զրկում են հասարակությանը քաղաքացիական լինելու հնարավորությունից: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր անձ հստակ իմանա, թե ինչ սահմաններում է պաշտպանված կողմնակի միջամտությունից, և ինչ դեպքերում պետությունը կարող է ազդել իր ծրագրերի իրականացման վրա: Քանի որ ինչպես ամբողջատիրությունը, այնպես էլ «...միապետությունը բացարձակապես անհամարելելի է քաղաքացիական հասարակությանը, հեղափոխության, չի կարող լինել քաղաքացիական կառավարման ձև» [2]:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հանրային հատվածի ակտիվ ներգրավվածությունը քաղաքականության մշակման, իրականացման, վերահսկման, ինչպես նաև վերանայման գործում ժողովրդավարական հասարակություն կերտելու գրավականն է:

Հասարակությունը, ինչպես նաև պետությունը չի կարող զարգանալ, երբ մասնավոր, պետական և հանրային հատվածները չեն համագործակցում և փոխլրացնում միմյանց՝ թե՛ ռեսուրսների օգտագործման, թե՛ քաղաքականության գաղափարական ու հայեցակարգային հիմքերի ձևավորման առումով: Արդյունավետ կառավարման հիմքում ընկած են սոցիալական և քաղաքական սուբյեկտների համագործակցությունը, փոխլրացումը և բազմաոլորտային փոխազդեցությունը: Երրորդ հատվածը լավագույնս ներկայացնելու համար պետք է ուշադրություն դարձնենք այս հատվածի կազմակերպություններին բնորոշ առանձնահատկությունների և տիպերի վրա:

Երրորդ հատվածի կազմակերպությունների գոյության անհրաժեշտությունը բխում է հետևյալ հանգամանքներից՝

- որոշ դեպքերում հանդես են գալիս որպես շուկայի ձախողումների՝ մենաշնորհի, անկատար տեղեկատվության, չեզոքացման գործիք:
- Կոմպենսացնում են պետության ոչ լիարժեք գործունեությունը սոցիալական խնդիրների լուծման գործում:
- Մի կողմից լինելով ճկուն ու նորարար, մյուս կողմից՝ օգտագործելով կամավորների աշխատանքը՝ կարող են մատուցել ավելի որակյալ ու արդյունավետ սոցիալական ծառայություններ, քան պետությունը:
- Կարող են լուծել սոցիալական այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը, ելնելով քաղաքական սահմանափակումներից, ի վիճակի չէ իր վրա վերցնել պետությունը [3]:

Ընդ որում, քաղհասարակության ձևավորման նախադրյալների փուլերը ներառում են նաև իրավական և սոցիալական պետության կայացման որոշակի տարրեր:

Այստեղ տեղին է ընդգծել Բ. Ջամբրովսկու այն միտքը, որի համաձայն՝ հասարակությունը ձևավորում է ոչ միայն պետության գործունեությունը վերահսկող մեխանիզմներ, այլև «սահմանում է այն սկզբունքները, որոնց հիման վրա պետությունը կարող է և պարտավոր է գործել» [4]:

«Երրորդ հատվածի կազմակերպություններ» եզրույթը հիմնականում գործավում է՝ ներկայացնելու այն կազմակերպությունները, որոնք ոչ թե մասնավոր, այլ պետական հատվածում են: Այս հատվածի մեջ են մտնում կամավոր և համայնքային կազմակերպությունները (բարեգործական և նմանատիպ այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են ասոցիացիաները, ինքնօգնության խմբերը և համայնքային խմբերը), սոցիալական ձեռնարկությունները [5]:

Երրորդ հատվածի կազմակերպությունների բնորոշ առանձնահատկություններն են՝

1. անկախ են կառավարությունից:

2. ԵՀԿ-ներն արժեքաբանորեն կողմնորոշված են, այսինքն՝ մոտիվացված են հասնելու սոցիալական նպատակներին (օրինակ՝ բարելավել հանրային բարեկեցությունը, շրջակա միջավայրը կամ տնտեսական բարեկեցությունը, և ոչ թե շահույթ ստանալ) [5]:

Երրորդ հատվածի կազմակերպությունները կարելի է բաժանել երեք տիպերի՝

1. **շահերի պաշտպանության կազմակերպություններ**, որոնք պետական կամ միջազգային մակարդակով աջակցում են շահառուներին և քաղաքացիներին իրենց հիմնախնդիրները բարձրաձայնելու հարցում՝ զուգահեռաբար իրականացնելով նաև միջնորդական առաքելություն:

2. **Գործառնական կազմակերպություններ**, որոնք խոցելի, ռիսկի խմբի քաղաքացիներին և շահառուներին ապահովում են համապատասխան ռեսուրսներով և ծառայություններով:

3. **Կազմակերպություններ, որոնք համատեղում և կատարում են նախորդ երկու տիպերի գործառույթները**: Այս ՀԿ-ները ձևավորվում են ոլորտային հատուկ հիմնախնդիրների կարգավարման համար (մարդու իրավունքների պաշտպանություն, առողջապահություն, բնության պաշտպանություն և այլն) [6]:

Երրորդ հատվածը ոչ առևտրային կազմակերպությունների ամբողջություն է, որը նպատակ ունի ծառայել հասարակական շահերին՝ կենտրոնացնելով շահերի պաշտպանության և գործառնական ջանքերը սոցիալական, քաղաքական ու տնտեսական նպատակների ուղղությամբ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արդարադատությունը, կրթությունը, առողջապահությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը և մարդու իրավունքները:

Այժմ անդրադարձ կատարենք պետական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացների դրսևորումներին ու միջազգային փորձին: Պետական քաղաքականության ճշգրիտ սահմանումը և ձևավորումը քաղաքականության իրականացման կարևոր բաղադրիչն է:

Պետական քաղաքականության ձևավորումը քաղաքականության մշակման կարևորագույն տարր է, որն ընդգրկում է տվյալ քաղաքականության նպատակները ու առաջնահերթությունները, ծախսերը, օգուտներն ու արտաքին գործոնները: Այն ներառում է քաղաքական մի շարք այլընտրանքներ և հանրային քաղաքականության գործիքներ [7]: Սակայն քաղաքականության նախագծման գործընթացում անհրաժեշտ է մոտիվացնել և խթանել այլ դերակատարների մասնակցությունը: Մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության անդամների, ձեռնարկատերերի, աշխատակիցների, քաղաքացիների, համայնքային խմբերի և հասարակական կազմակերպությունների ներգրավումը հանրային քաղաքականության նախագծման գործընթացում գերկարևոր է, քանի որ զարգացող երկրների կառավարությանը հնարավորություն է տալիս բարելավելու կառավարման գործընթացների թափանցիկությունն ու որակը՝ բարձրացնելով արդյունավետությունը:

Շահույթ չհետապնդող բազմաթիվ կազմակերպություններ ջանում են տեղեկացնել և ազդել սոցիալական և տնտեսական ներքին քաղաքականության, ինչպես նաև միջազգային հարցերի վրա: Քաղաքականության մշակման գործընթացները ներառում են հետազոտական աշխատանքներ, մշտադիտարկում, գնահատումներ, զարգացման ռազմավարական ծրագրեր, նախագծեր (ներկայացվում են անկուսակցական մարմինների կողմից): Որոշ խմբեր փորձում են ազդել գործադիր, մյուսները՝ օրենսդիր մարմնի վրա: Ուղեղային կենտրոնները և համալսարաններն իրականացնում են հետազոտություններ, գնահատումներ՝ քաղաքականություն մշակողների համար տեղեկատվությունը մատչելի դարձնելով հրատարակությունների, լրատվամիջոցների, ֆորումների և անհատական քննարկումների միջոցով:

Շահերի պաշտպանության ոչ առևտրային կազմակերպությունները փորձում են կրթել հասարակությանը, խրախուսել անհատներին, որ անմիջականորեն դիմեն իրենց ներկայացուցիչներին, կազմակերպեն ստորագրահավաք կամ միջնորդություններ ներկայացնեն՝ փորձելով լուծել ծառայած խնդիրները: Ոչ առևտրային որոշ կազմակերպություններ հանրային քաղաքականության վրա փորձում են ազդել նաև ցույցերի, նստացույցերի, շքերթների և բոյկոտների միջոցով: Դրամաշնորհային հիմնադրամները և շահույթ չհետապնդող այլ կազմակերպությունները փորձում են ազդել հանրային քաղաքականության վրա՝ ցույց տալով հանրային հարցերի նկատմամբ այլընտրանքային մոտեցումների արդյունավետությունը: Նրանք կարող են իրականացնել փորձարարական ծրագրեր, գնահատել արդյունքները՝ հաղորդելով պետական մարմիններին [8]:

Քաղաքական տարբեր գործիչներ և քաղաքականություն մշակողներ հավատում են, թե քաղաքացիների որոշումների կայացման մասնակցային ուղղակի ձևը կարող է նպաստել ժողովրդավարության զարգացմանը և ռացիոնալիզմին: Սակայն շատ դերակատարների ներգրավվածությունը չենք կարող դիտարկել՝ առաջնորդվելով սոսկ թվաքանակով:



ԵՀԿ-ի կարգավորող կարողությունները աճում են՝ նպաստելով քաղաքականության բազմակողմանի ձևավորմանն ու իրականացմանը:

Տնտեսական և քաղաքացիական հասարակության մի շարք դերակատարներ նպաստում են տեղեկատվության հավաքագրմանն ու հետազոտությունների շրջանակների ընդլայնմանը: Թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմները կարող են իրականացվել, երբ շահագրգիռ կողմերին բերում ենք միևնույն մակարդակի վրա՝ քաղաքականության փոփոխությունների քննարկման համար ստեղծելով ինստիտուցիոնալ նոր հարթակներ [9]:

Երրորդ հատվածը, որը բաղկացած է քաղաքացիական հասարակության ասոցիացիաներից և հիմնադրամներից, կամավորներից և քաղաքացիական այլ կազմակերպություններից, վերականգնվող ու կայուն ռեսուրսներ է առաջարկում Եվրոպայում սոցիալական ու տնտեսական խնդիրները լուծելու համար:

Սոցիալ-տնտեսական աղետներն ու մի շարք այլ հիմնախնդիրներ, որոնց լուծման համար ծախսվում են ահռելի ռեսուրսներ, անմիջականորեն հարվածում են պետքույզերին: Այս իրավիճակի լուծումը և այլընտրանքային տարբերակը հիմնախնդիրների կարգավորման գործում համագործակցությունն է ԵՀԿ-ների հետ՝ հանուն Եվրոպայի ակտիվ քաղաքացիական և տնտեսության զարգացման [10]:

Կազմակերպությունները (օրինակ՝ Օքսֆամը, Գրինփիսը և այլն) ծառայում են հասարակությանը ազգային և միջազգային մասշտաբով: Ի սկզբանե կոչվել են կամավորական կամ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, այժմ՝ ոչ պետական կազմակերպություններ: Միավորված ազգերի կազմակերպության համակարգում գործածվում է «ՀԿ» եզրույթը՝ որպես տարբերակիչ պետական կառավարման այլ մարմիններից: Բարեգործական և հասարակական կազմակերպություններն ունեն և ունեն լայն տարածում, սակայն ոչ պետական կազմակերպությունները համեմատաբար ժամանակակակից ֆենոմեն են: Եվրոպայում և Ամերիկայում քաղաքացիական իրավունքների ամրապնդման ժամանակաշրջանում՝ 18-19-րդ դարերում, քաղաքացիների շահերի և իրավունքների պաշտպանության, համայնքների բնակիչների կարիքների գնահատման, համայնքների զարգացման և նոր քաղաքականության խթանման համար բազմաթիվ կազմակերպություններ ստեղծվեցին: Քաղաքագետները ԵՀԿ-ները դիտարկում են իբրև ճնշման կամ լոբբինգի խմբեր, բայց այս հայեցակարգերը չեն արտահայտում նրանց հասարակական լայն ազդեցությունը:

1980-ական թվականներին «քաղաքացիական հասարակությունը» նորաձև եզրույթ էր, սակայն չափազանց լայն էր և ամորֆ: Այդ իսկ պատճառով միջգիտակարգային մակարդակով 1990 ական թթ.-ին ուշադրությունը սևեռվեց ԵՀԿ-ի և հասարակության մեջ նրա դերի վրա: Գիտնականները գտնում են, որ ԵՀԿ-ները կարող են ավելի մեծ լեգիտիմության մակարդակ ունենալ, քան ազգային կամ պետական մարմինները: Օրինակ, ըստ Գերմանիայում անցկացված սոցիալոգիան՝ մարդիկ ավելի շատ վստահում են ԵՀԿ-ներին, քան գերմանական կառավարությանը [10]:

Երրորդ սեկտորի կազմակերպություններն ու կամավորները հասարակության համար կատարում են այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են ծառայությունների մատուցումը, շահերի պաշտպանությունը, համայնքների կառուցումը կամ զարգացումը [11]: Երրորդ հատվածի հիմնական նպատակն է ստեղծել այնպիսի գիտելիք, որը թույլ կտա արժեքավոր ներդրումներ կատարել՝ նպաստելով Եվրոպայի սոցիալ-տնտեսական զարգացմանը [12]:

ԵՀԿ-ները պաշտոնական լիազորություններ ունեն միջազգային որոշումների կայացման գործում: ԵՀԿ-ների գործողությունները կարող ենք վերլուծել երկու տարբեր՝ միկրո և մակրոքաղաքականության մակարդակներում:

Կառավարությունները և միջազգային կազմակերպությունները երբեմն ԵՀԿ-ներին անհարմարություններ են պատճառում, անգամ՝ սպառնում նրանց շահերին: Բայց փորձը ցույց է տալիս, որ պետական գործիչները հիմնականում հաշվի են առնում ԵՀԿ-ների նորարարական գաղափարները և համապատասխան տեղեկատվությունը [13]:

Այսօր համաշխարհային քաղաքականության որոշումների կայացումն աննախադեպ է զարգացել, քանի որ այդ որոշումների կայացմանը ներգրավվում և ներառվում են նաև քաղհասարակության կազմակերպությունները: Հատկապես զարգացող երկրներում որոշումների կայացման բանակցային գործընթացը ներառում է քաղաքացիական հասարակությունը, մասնավոր և պետական հատվածները:

Համաշխարհային մակարդակում ոչ մի համակարգ չի գերիշխում: Քաղաքացիական հասարակության որոշ կազմակերպություններ կան նաև համաշխարհային քաղաքական համակարգում: Խոսքը հոգևոր կազմակերպությունների, ոչ պետական բազմաթիվ կազմակերպությունների ու սոցիալական մի շարք շարժումներ մասին է: Սոցիալական շարժումը հավաքական գործողությունների տեսակ է՝ ուղղված քաղաքական կամ սոցիալական խնդիրների հստակ լուծմանը: «Սոցիալական շարժում» են անվանում նաև հավաքական ջանքերը, որոնք նպաստում կամ խոչընդոտում են սոցիալական այս կամ այն փոփոխությանը: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության ներկայությունը թույլ է, քանի որ ազդեցությունն ու լիազորությունները սահմանափակ են, իսկ մշտական ներկայությունը՝ վիճարկելի [13]:

Նաջամն առաջ է քաշում կառավարություն-ՀԿ հարաբերակցության մոդել, որի հիմքում ռազմավարական ինստիտուցիոնալ շահերի հայեցակարգն է: Հեղինակն առանձնացնում է հնարավոր չորս հարաբերություն՝ կախված այս երկու դերակատարների նախընտրած քաղաքականությունների նպատակների ու միջոցների համընկնումից՝

- համագործակցություն (cooperation) - նման նպատակներ, նման միջոցներ,
- բախում (confrontation) - տարբերվող նպատակներ, տարբերվող միջոցներ,
- փոխլրացում (complementarity) - նման նպատակներ, տարբերվող միջոցներ,
- կոոպտացիա (co-optation) - տարբերվող նպատակներ և նման միջոցներ:

Այսպիսի մոտեցումն ավելի արդյունավետ է թվում, քանի որ կարևորում է ոչ թե պարզապես կառավարության բնույթը (ժողովրդավարական կամ ավտորիտար), տնտեսական հյուսվածքը (լիբերալ շուկայական կամ վերահսկվող տնտեսություն), այլ շահերն այս երկու կողմերի հարաբերություններում: Որպես վերլուծության սխեմա՝ թույլ է տալիս նորովի նայել երրորդ հատվածի՝ քաղաքականությունների վրա ազդելու հնարավորությունների և միջոցների խնդրին, սեկտորի հնարավոր զարգացմանն ու ուժեղացմանը:

ԵՀԿ-ների դերը քաղաքականություններում հատկապես արժևորվում է այն մոտեցումներում, որտեղ քաղաքականությունը դիտվում է ոչ թե պարզապես որպես բանիմաց պաշտոնյաների մշակած իրավական հրամանագրեր, այլ այս կամ այն համայնքի կողմից որևէ նպատակի հասնելու կամ փաստարկման և համոզելու գործընթաց:

Դժվար է տիպաբանել հայաստանյան իրավիճակն՝ առաջնորդվելով այս չորս մոդելներից որևէ մեկով, սակայն ՀԿ սեկտորի տարբեր ոլորտներում ու հատվածներում չորսն էլ առկա են, ընդ որում՝ տարբեր համամասնությամբ [14]:

Ըստ «Թրանսփարենս ինթերնեշնլի»՝ «ՀԿ-ների զարգացման հնարավորությունները և ռիսկերը» խորագրով հետազոտության (2011 թ.)՝ որոշ ՀԿ-ներ ջանում են համագործակցել ՀՀ Ազգային ժողովի հետ, այնուամենայնիվ, ոչ մի փորձ չկա ՀԿ-ներին որոշումների կայացման գործընթացում ներգրավելու առումով: ՀՀ Ազգային ժողովում ընդամենը մի քանի քննարկումներ են ընթացել, որոնց հրավիրել են նաև ՀԿ-ների: Սա իրականում եղել է ընդդիմադիր խմբակցության ճնշման արդյունք [15]: Կամավորական աշխատանքը ևս չի կարգավորվում ՀՀ օրենսդրությամբ, ուստի, իրավական բացթողումների հետևանքով կամավորագրության օրինականությունը տարաբնույթ մեկնաբանությունների առիթ է դառնում:

Վեր հանելով ՀԿ հատվածի զարգացմանն ուղղված բազմազան կարծիքներն ու տեսակետները՝ կարող ենք բացահայտել արտաքին միջավայրի հետ կապված մի շարք մարտահրավերներ: Այդպիսին է իրավական շրջանակը, որը, ամենայն հավանականությամբ, կարող է նյութ դառնալ համապատասխան բարեփոխմանն ուղղված շահերի պաշտպանության համար: Այն նաև բացահայտել է ՀԿ-ների մի շարք թույլ կողմեր, որոնք ազդում են նրանց աշխատանքի և ճանաչելիության վրա:

Վերջին շրջանում հայկական իրականության մեջ երրորդ հատվածի զարգացման համար մեծ հենք դարձավ համացանցը՝ ծառայելով որպես հասարակական կարևորություն ունեցող տարաբնույթ խնդիրների լուծման վիրտուալ հարթակ: Այսօր գրեթե բոլոր քիչ թե շատ հայտնի հասարակական կազմակերպությունները, պետական գործիչներն ու գերատեսչություններն ունեն իրենց կայքերը և սոցիալական ցանցերը, որոնց միջոցով փորձում են գործունեություն ծավալել: Բացի այդ, Հայաստանում ներդրվում է էլեկտրոնային կառավարման համակարգ [16]: Այսպես, պետական և ոչ պետական կառավարական մարմինների համագործակցության նորաստեղծ առցանց հարթակ է Իրավական ակտերի նախագծերի հրապարակման

միասնական կայքը [17]: Փաստացիորեն պետություն-քաղհասարակություն կապը դառնում է ոչ թե միջնորդավորված, այլ ինտերակտիվ. սա ժողովրդավարության ամուր հենասյուն է:

Այստեղ տեղին է անդրադառնալ նաև ՀՀ ՔՀԿ կայունության ցուցանիշին: ՀՀ-ում ըստ ՔՀԿ կայունության ցուցանիշի՝ ՔՀԿ կայունությունը որոշ բնագավառներում բարելավվել է: 2016 թ. դեկտեմբերին խորհրդարանն ընդունեց «Հասարակական կազմակերպությունների մասին» նոր օրենքը, որը մշակվել էր քաղհասարակության ակտիվ մասնակցությամբ՝ տարիներ շարունակ գտնվելով քաղաքացիական հասարակության և կառավարության քննարկման օրակարգում: Փոփոխություններ են կատարվել նաև հիմնադրամների մասին օրենքում: Քաղաքացիական ակտիվությունն աճել է. ոչ ֆորմալ խմբերը շահերի պաշտպանության տեղական նախաձեռնություններ են իրականացրել, իսկ գրանցված ՔՀԿ-ներն ու ցանցերն ինստիտուցիոնալ հարթակների միջոցով մասնակցել են պետական քաղաքականության գործընթացներին: Բազմաթիվ ՔՀԿ-ներ ֆինանսավորման նոր աղբյուրներ են փնտրում և եկամուտ ստանալու նպատակով օգտագործում են քրաուդֆանդինգի (crowdfunding) նոր տեխնոլոգիաները, նվիրատվություններ հայցում առևտրային ընկերություններից՝ հիմնելով սոցիալական տարբեր ձեռնարկություններ: Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տվյալների՝ 2016 թ. հոկտեմբերի դրությամբ Հայաստանում գրանցվել էր հասարակական 4573 կազմակերպություն, 1042 հիմնադրամ և իրավաբանական անձանց 312 միություն. այս ցուցանիշները 2015 թ.-ի համեմատ փոքր-ինչ աճել են: Փորձագետների գնահատմամբ՝ ակտիվ է գրանցված կազմակերպությունների միայն մոտ 20 %-ը [18]:

Աշխատանքի ընթացքում կատարված հետազոտությունը բավարար հիմքեր է տալիս եզրակացնելու՝

- ՀԿ-ները կոմպենսացնում են պետության ոչ լիարժեք գործունեությունը սոցիալական խնդիրների լուծման գործում,
- շահույթ չեն հետապնդում, գործունեություն են ծավալում տեղական, ազգային և միջազգային մակարդակներում:
- Հիմնականում իրականացնում են խոցելի խմբերի կարիքների գնահատում՝ տրամադրելով աջակցություն և խորհրդատվություն,
- իրականացնում են շահերի պաշտպանության և լրբբինգ՝ փորձելով ազդել կառավարության քաղաքականության և ծրագրերի վրա,
- կրթում են հասարակության անդամերին, բարձրացնում են իրազեկվածության մակարդակը, խթանում են ոչ ֆորմալ կրթության զարգացմանը,
- բարելավել զարգացող երկրների կառավարությանը աշխատանքի թափանցիկությունը, որակը՝ քաղաքականության նախազժման և իրականացման գործընթացում բարձրացնելով արդյունավետության գործակիցը,
- նպաստել ՀՀ հասարակության ժողովրդավարացմանն ու արդիականացմանը՝ միջնորդող օղակ դառնալով քաղաքացու և պետական կառույցների միջև՝ օգնելով

կամ ստիպելով աշխատել, իսկ որոշ դեպքերում՝ անգամ փոխարինել որոշ գործառույթներով,

- խթանել և ակտիվացնել կառավորություն-ՔՀԿ համագործակցությունը:

Այսպիսով, ակնհայտ է հանրային հատվածի ազդեցությունը՝ ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման գործում: Պետական մարմինների ներկայացուցիչները ՔՀԿ-ների նկատմամբ դրական վերաբերմունք են ցուցաբերում՝ բարձր գնահատելով ՔՀԿ-ների աջակցությունը սոցիալական խնդիրների լուծման հարցում: Չնայած այս ամենին, ՔՀԿ-ները դեռևս կազմակերպչական դժվարությունների և նորմատիվ խոչընդոտների են հանդիպում, ավելին՝ երբեմն նաև պետության կողմից գործադրվող սահմանափակումների: Սակայն վերջին շրջանում պատկերը զգալիորեն փոխվել է:

Կարող ենք փաստել, որ պետական մարմինների կողմից ՔՀԿ-ների՝ իբրև կարևոր դերակատարների ընկալումը բարելավվում է, ինչն արտահայտվում է ՔՀԿ-պետական իշխանություն երկխոսության հարթակների և առանձին նախարարությունների ու գերատեսչությունների մակարդակում համատեղ նախաձեռնությունների աճով: Տեղական իշխանությունները ևս ավելի են կարևորում ՔՀԿ-ներին՝ շնորհիվ նրանց՝ համայնքներում կատարվող աշխատանքի:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Политология** (под. ред. Оганесян А. А.), Москва, 1999, с. 59.
- [2] **Локк Дж.**, Сочинения, в 3 т-х, Москва, т. 3, с. 312.
- [3] **Хохлова М. М., Бачурин Э. А.**, Социальная политика, Красноярск, 2010, сс. 12-3.
- [4] **Замбровски Б. Я.**, «К вопросу о формировании гражданского общества и правового государства», в журн. Социально-полит. науки, Москва, 1991, N 6, с. 32.
- [5] ‘What are third sector organizations and their benefits for commissioners’ article, URL: <https://www.nao.org.uk/successful-commissioning/introduction/what-are-civil-society-organisations-and-their-benefits-for-commissioners/> (Accessed: 03.01.2017).
- [6] «Պետական քաղաքականության և հկ-ների ազդեցությունը՝ մասնավոր ներդրումների ներգրավվման գործում» ԵԱՀԿ հաշվետվություն, 2008, էջ 3-4, URL: <http://www.oecd.org/investment/globalforum/40400836.pdf>- (14.02.2017):
- [7] The Argumentative Turn in Policy Analysis and Planning, Edited by Frank Fischer and John Forester, 1993, p. 291.
- [8] **Elizabeth T. Boris**, Nonprofit organizations in a democracy: varied roles and responsibilities, URL: <http://socio.ch/movpar/boris.htm/> (Accessed: 10.03.2017).
- [9] **Do Phu Hai**, ‘Process of public policy formulation in developing countries’, Faculty of Public Policy Graduate Academy of Social Science (GASS), Vietnam, pp. 3-6, URL: [http://archives.ippapublicpolicy.org/IMG/pdf/panel\\_11\\_s1\\_hai\\_phu\\_do.pdf](http://archives.ippapublicpolicy.org/IMG/pdf/panel_11_s1_hai_phu_do.pdf) (Accessed: 07.03.2017).

[10] NGOs and Global Policy-Making By **James A. Paul** Executive Director, Global Policy Forum, June 2000, p. 1.

[11] **Enjolras B.**, 'The third sector has the third largest workforce of any 'industry' in Europe' article, 2016, p. 1, URL: <http://nonprofit.xarxanet.org/interviews/bernard-enjolras-third-sector-has-third-largest-workforce-any-industry-europe-> (Accessed: 15.03.2017).

[12] Third Sector Impact article, February 03, 2014-28, 2017, p. 1, URL: <http://emes.net/research-projects/third-sector/tsi-project/> (Accessed: 17.03.2017).

[13] Civil Society's Role In Global Policymaking By **Lisa Jordan** article, March 2003, p.1, URL: <https://www.globalpolicy.org/component/content/article/177/31621.html> (Accessed: 18.03.2017).

[14] **Majone G.**, Evidence, Argument, and Persuasion in the Policy Process; Stone, D. Policy Paradox and Political Reason, 1989, p. 12.

[15] Թրանսփարենսի ինթերնեյշնլ, «Հ-ների զարգացման հնարավորությունները և ռիսկերը» հետազոտություն, 2011, էջ 19,

URL: [https://transparency.am/files/publications/NED\\_publication\\_arm\\_3.pdf](https://transparency.am/files/publications/NED_publication_arm_3.pdf) (հղումը կատարվել է՝ 10.11.2017):

[16] ՀՀ էլեկտրոնային կառավարման պաշտոնական կայք, URL: <https://www.e-gov.am/> (հղումը կատարվել է՝ 12.10.2017):

[17] Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, URL: <https://www.e-draft.am/> (հղումը կատարվել է՝ 04.11.2017):

[18] 2016 CSO Sustainability Index, pp. 2-3, URL: [https://www.usaid.gov/sites/default/files/documents/1866/CSOSI\\_Report\\_7-28-17.pdf](https://www.usaid.gov/sites/default/files/documents/1866/CSOSI_Report_7-28-17.pdf) (Accessed: 18.09.2018).

Սերոբյան Սիրանուշ

## **ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ**

**Բանալի բառեր՝** Երրորդ հատված, պետական քաղաքականություն, քաղաքացիական հասարակություն, քաղաքացիական հասարակական կազմակերպություններ, ազդեցություն, հասարակական կազմակերպություններ, կառավարություն-հկ փոխհարաբերություններ:

Երրորդ հատվածը կարևոր նշանակություն և ազդեցություն ունի պետության զարգացման ու առաջընթացի գործում: Առանց պետական, մասնավոր և երրորդ հատվածի համագործակցության հնարավոր չէ պետության առջև ծառայած հիմնախնդիրները կարգավորել և տալ արդյունավետ, ռացիոնալ լուծումներ: Երրորդ հատվածի կազմակերպությունները շահերի պաշտպանության և լոբբինգի իրակա-

նացմամբ փորձում են ազդել կառավարության վրա, բարելավել թափանցիկությունը և հաշվետվողականությունը՝ բարձրացնելով քաղաքականության մշակման և իրականացման գործընթացի արդյունավետությունը:

Серобян Сирануш

## **ВЛИЯНИЕ ТРЕТЬЕГО СЕКТОРА НА РАЗВИТИЕ И РЕАЛИЗАЦИЮ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ**

**Ключевые слова:** третий сектор, государственная политика, гражданское общество, организации гражданского общества, влияние, неправительственные организации, отношения между правительством и НПО.

Третий сектор имеет большое значение и влияние на развитие и прогресс государства. Без эффективного сотрудничества между государственным, частным и третьим секторами невозможно решить и предложить эффективные, рациональные решения проблем, стоящих перед государством. Сторонние организации посредством адвокации и лоббирования стремятся повлиять на правительство, повысить прозрачность и подотчетность, повышая эффективность выработки и процесса реализации политики.

Serobyan Siranush

## **INFLUENCE OF THE THIRD SECTOR ON THE DEVELOPMENT AND IMPLEMENTATION OF STATE POLICY**

**Keywords:** third sector, state policy, civil society, civil society organizations, influence, non-governmental organizations, relations between the government and NGOs.

The third sector has great importance and influence on the development and progress of the state. Without effective cooperation among public, private and third sectors, it is impossible to solve and propose effective, rational solutions to the state problems. Third-party organizations are trying to influence the government through advocacy and lobbying, as well as to increase transparency and accountability, increasing the efficiency of policy development and implementation.